

3. Եւ վերջաւորող բայերը. օրինակներն են՝
խիլ՝ բշեւլ. ունիլ՝ տաշեւլ. րանիլ՝ բաշեւլ (չբշեւլ
բախշեւլ). մնիլ՝ մաշեւլ. ինիլ՝ քա[ք]շեւլ.— Բացա-
ռութիւն է միայն խնդիլ՝ խարշեւլ և այս թերևս
զանազանելու համար խնդիլ կերպով անունէն:

4. Այս երեք ընդհանուր կանոններէն դուրս
իլ վերջաւորութիւնն ունին նաև հետևեալ բայերը.
բեւլ.— Կրիլ՝ աչբեւլ. հեփիլ՝ համբեբեւլ. կյրիլ՝
գրբեւլ. իրիլ՝ քեբեւլ. պիիլ՝ բեբեւլ. սիիլ՝ սեբեւլ.
փեւլ.— խնիլ՝ խարբեւլ. սրիիլ՝ սրբեւլ. լիիլ՝
լարբեւլ. խիիլ՝ եփեւլ:

սեւլ.— կոսիլ՝ կասեւլ. կամնեւլ. փիլ՝ քսեւլ.
մեւլ.— քրեիլ՝ դնեւլ. լմիլ՝ լմնեւլ. անիլ՝ առնեւլ
(անեւլ. ընեւլ). շիմիլ՝ շիմեւլ:

ծեւլ. մեւլ.— խոմիլ՝ խանծեւլ. հեմիլ՝ հնծեւլ. լմե-
ծիլ՝ անեծեւլ. ֆիլ՝ ձգեւլ:

րեւլ. սեւլ.— կիսիլ՝ կուտեւլ. պնշիլ՝ պաշտեւլ.
խեխիլ՝ խեղդեւլ. փնցիլ՝ քանդեւլ. կորիլ՝ կաթեւլ
(կայլակեւլ). փրիլ՝ բրդեւլ (հաց և լն):

մեւլ.— կո՛ղմիլ՝ ծեծեւլ (անշուշտ կաղմեւլ ձևէն):

լնլ.— խլիլ՝ խլեւլ:

ծեւլ.— յիծիլ՝ արծեւլ:

մեւլ.— պիմիլ՝ բահեւլ:

Այս 4-րդ կանոնին պայմանները սակայն ընդ-
հանուր չեն. որովհետև կան բայեր՝ որ թէև տոյն
վերջաւորութիւններն ունին, սակայն նոյն փոփո-
խութիւնը չեն կրած. այսպէս՝ խփիլ՝ խփեւլ. մտ-
փրիլ՝ մտփեւլ. քլարիլ՝ շարշարեւլ. խոսիլ՝ խոսեւլ:

Եւ վերջաւորութիւնը ղիլ ձևին վերածող
սակաւաթիւն բայերը մասնաւոր կանոնի մը հպա-
տակութիւն չեն ցուցներ. եղած օրինակները հե-
տևեալներն են.— մրեկնիլ՝ մեկնեւլ (երկարեւլ). մրե-
կնիլ՝ մեռանեւլ. մլնիլ՝ մլնեւլ. մկիլ՝ մեկնեւլ.
մրնիլ՝ մրնեւլ. մրնիլ՝ քամեւլ:

Այս վերջաւորութիւնն ստացած են՝ քրեմալ՝
տեսանեւլ և զիպալ՝ զիտեւլ:

Իսկ այս ամէնքէն դուրս եղած բոլոր ձևե-
րուն մէջ գրաբարի եւ վերջաւորութիւնը վերա-
ծուած է ելի. օր. լծիլ՝ լծեւլ. խրնիլ՝ խորովեւլ.
մննիլ՝ մտանեւլ. ցղիլ՝ ցնկեւլ. անիլ՝ ջերմեւլ և լն:

(Կը շարունակուի)

Հրաշխայ Ե. Ամատեան.

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ա Ն Ք *

Ժ.Ձ

Ազուէսագրքի ինչպէս և Վարդանի ա-
նուամբ յայտնի միւս Առակագրքերի կամ
նման ժողովածուների մէջ բաւական սրտ
տեղ են բռնում Հարանց Վարքերից քա-
ղուածքներ կամ փոխառութիւններ: Տեղ
տեղ մինչև անգամ աղբիւրի ցուցումն է լի-
նում առակի կամ պատմութեան սկզբում
այսպիսի խօսքերով՝ Գրեալ է ի Վարս Հա-
րանց (Տե՛ս Մ առ ի Հետադօտութիւնը § 300):
Ուրեմն Առակագրքերի բաղմամբ աղբիւր-
ներից մէկն է և Հարանց Վարքը: Հայելի Վա-
րուցը նոյնպէս Հարանց Վարք է կոչում: և
Հին Հարանց Վարքերից տարբերելու հա-
մար, սովորաբար աւելացնում են նրա վրայ
ինչպէս տեսանք, Փրանկաց բառը=Հարանց
Վարք Փրանկաց կամ Հայելի Վարուց Փրան-
կաց: Հին Հարանց Վարքերից փոխառութիւն-
ներ կան Առակագրքերի մէջ, ուստի և ան-
սպասելի չէ, եթէ այդպիսի փոխառութիւն-
ներ լինին և Փրանկաց Հարանց Վարքից: Եւ
որովհետև վերջինս հայ թարգմանութեան
ժամանակը մեզ յայտնի է, ուստի և սրանից
եղած փոխառութիւնները կարող են ծառա-
յել մեզ իբրև կառուան այս կամ այն Առակա-
գրքի խմբագրութեան ժամանակը որոշելու
համար:

Հին Վարք Հարանցից եղած փոխառու-
թեան դնում ենք այստեղ միայն երկու օ-
րինակի գաղափար տալու համար փոխառու-
թեան ժամանակ կատարուած լեզուական եւ
ուղղագրական փոփոխութեանց մասին: Դա-
րերի ընթացքում այսպիսի նորոգութեան
շատ կամ սակաւ չափով, ենթարկուել են մեր
բոլոր բնագրերը 1:

* Տճս. «Արարտ» 1899 թ. համար Ժ. և ժԱ. եր. 451.

1 Այս հարկաւ մի քանակի երեւոյթ լի է սեղի
կ ունեցիլ բոլոր ազգերի մասնագրութեանց մէջ: Որչափ
աւելի ժողովրդական է եղել մի գրուածք, որչափ
աւելի շատ է ընդօրինակուել, այնչափ աւելի մեծ են եղել
այդ լեզուական «նորոգութիւնները»: Տարիներ առաջ այդ
մասագրական հետազոտութեանց համար ամենակարեւոր՝ և



Վ Ա Ր Ք Լ Ա Ր Ա Ն Յ Ի

Հատ. Ա. Էջ 622

Էր միայնակեաց մի որ անկաւ ի շնութիւն
 երեք տարի և հայր վանիցն հոգետես էր և ոչ
 կարէր իմանալ և յաւուր միում իմացաւ
 հայրն զչար գործ նորաւ կոչեաց զնա և ա-
 սէ. Ասա ինձ ո՞ր էիր յայսմ գիշերի և ըն-
 դէր բարկացուցեր զԱստուած: Եւ անկեալ
 առ ոտս նորա և ասէ. Մեղայ առաջի Աստու-
 ծոյ և այս ամբ երեք են աղտեղեալ գոր-
 ծոցս որով պատրեալ եղէ: Ասէ հայրն. Եւ
 զինչ գործ առնէիր դու որ Աստուած յինէն
 ծածկէր զչարսն: յորում բմոնեալն էիր.
 Եւ նա ասէ թէ Իմ սոփորութիւն էր որ
 յամէն գիշեր որ երթայի ի գործն աղտեղու-
 թեան: Ես զուրթ կանոն սաղմոսն և ապաշ-
 15 խարութեան շարակնք լալով ասէի ի գնալն
 և ընդ ի գալն (այսպիսի) և յայսմ գիշերի
 ծուլացոյց զիս շար զեն և անյուսացոյց և
 անօգուտ ասաց զաղօթմն իմ և բնաւ զԱս-
 տուած ոչ յիշեցի և ոչ սաղմոսեցի: Եւ ասէ
 20 հայրն. Օրհնեալ է ողորմութիւնն Աստուծոյ
 և քաղցրութիւնն որ ոչ կամի զկորուստ
 մարդոյ: Եւ արգ որովհետև Աստուած ոչ
 յիշէր զայլ գործսն քո զերիցն ամաց, նոյն-
 պէս և ես թողում քեզ զայսմ գիշերիս ո-
 25 ղորմութեամբ Աստուծոյ: Եւ նա դարձաւ
 Աստուած և եղև այր կատարեալ ապաշխա-
 րութեամբ և բարեգործութեամբ:

Սոյն այս պատմութիւնն է և Աղուէտա-
 զբբում և միւս Առակազրքերում: Մտառի
 հրատարակութեան մէջ ag=Աղուէտազրք,
 V, I, C, C²=զանազան 2-երոյ որոնց մասին
 տես Մտառի աշխատութեան Ա. հատ. էջ XIV
 — XV.

Խթ. ՄԻԱՅՆԱԿԵԱՅ ՇՈՒՆ ԵՒ ՀՈԳԵՏԵՈ
 Վ Ա Ն Ա Հ Ա Ր Ք *

(49V=47 I=48ag=12C=12C²)

Էր միայնակեաց մի ալ և արար շնութիւն
 գ. ամ. և հայր վանացն հոգետես էր և ոչ
 կարեր իմանալ. և յաւուր միում յիմացաւ
 հայրն զչար գործս նորաւ կոչեաց զնայ և ա-
 սէ. ասայ ինձ թէ յուր էիր յայսմ գիշերի:

հետոյն ասպացուցանող օրինակներ ենք բերել մեկ խորե-
 անցոյց (Տես Միաբան Խորեանցոյ Պատմ. Ուսում. գլ. Ա.):
 1. Վարդ Մրոց Հարանց և ի հաղափարութիւն
 անցին ըստ կրկին բարգմանութեան նախնեաց Հատ. Ա. և Է
 Բ. Վեհերիկ, 1855:
 * Վերանայր Մտառն է:

և ընդէր բարկացուցեր զաստուած. և անկաւ
 առ ոտս նորա և ասէ. Մեղայ առաջի աս-
 տուծոյ և այս .գ. ամ է. որ շնայի. և ասէ
 հայրն. զինչ գործ առնէիր որ աստուած յի-
 10 նէն ծածկէր զչարն քո. և նայ ասէ, թէ իմ
 սոփորութիւն այն էր որ յամէն գիշեր եր-
 թայի ի շնալ՝ զուրթ կանոն սաղմոսն և զա-
 պաշխարութեան շարակնն լալով ասէի և
 հառաչանաւք ի գնալն. և յայսմ գիշերի
 15 ծուլացուց զիս շար զեն և անյուսացուց
 թէ չէ քո աղաւթքն ընդունելի և աւգուտ.
 և ես բնաւ զաստուած ոչ յիշեցի և ոչ սաղ-
 մոս ասացի. և ասէ. աւրհնեալ է և արհ-
 նեալ է ողորմութիւն աստուծոյ և քաղցրու-
 20 թիւն և ոչ կամի զկորուստ մարդոյ. և արգ
 որովհետև աստուած ոչ յիշէր զշնութիւն
 քո. նոյնպէս և ես թողում յայսմ գիշերիս
 ողորմութեամբ աստուծոյ. և նա դարձաւ
 յաստուած և եղև այր կատարեալ ապաշխա-
 րութեամբ և բարեգործութեամբ: (Сборн.
 25 Притчъ Вардана, часть II. 69—70) *

Վ Ա Ր Ք Լ Ա Ր Ա Ն Յ
 Հատ. Ա. Էջ 622—623

Էր և այլ միայնակեաց մի որ յազգամէնէ
 նախանձող շարին զլորեալ անկաւ ի մեղս՝
 կացեալ ամս բազումս ի գործ կամաց այնորիկ
 որ զշնալն ախորժէ: Եւ սոփորութիւն մի ու-
 5 նէր բարի զի երբ դայր ի նանիր գործոցն
 յայնցանէ ի խուցն իւր նա ձգէր զկնգուղն
 իւր և հանգրիճէր և սկսանէր սաղմոսել և
 ծուներ զնել ուժգնաբար և լայր հառաչանալք
 և ջերմ արտասուք, և հարկանէր զերեսն
 10 և ձողէր զմորուսն և թքանէր ի նա: Եւ ձան-
 ձրացաւ ստամայ յաղօթից նորա. գնաց առ
 նա ի գիշերի մի և ասէ ցնա. Այ գարշելի
 պիղծ, քանի անհանգստես զիս և նեղես. զի
 գաս առնես զկամս իմ և շնալով զիս ուրախ
 15 առնես, զարձեալ տրանջես զինէն առ աստուած,
 լաս և հառաչես և տրամեցուցանես զիս: Եւ ասէ
 միայնակեացն. Ով դու նդովեալ շուն որ մե-
 զօք ոչ յագիս. այս խուցս դարձոց է և գաս
 դու և ուսամբ հարկանես զզլուխ իմ և յի-
 20 մարեալ գործեմ զմեղս իսկ յորժամ զարթ-
 նում և խելք իմ յիս գայ՝ ես ուն մի քեզ
 հարկանեմ զի աստուած իմ ողորմած է և ոչ
 թողու զիս ի ձեռս քո: Եւ շնորհօքն
 աստուծոյ հալածեցաւ ի նմանէ գեն պոռնկու-
 թեան:

* Չանց ենք առնում 2-երի արքեր ընդերցում-
 ներ հշակակել այդ բանի համար զիմել Մտառի հրատա-
 րակութեանը:

Ահա նոյն այս պատմութիւնը Առակա-
գրքերում:

ԽԸ. ՄԻԸԵՆԸՎԿԵԱՅ ՇՈՒՆ ԵՒ ՍԱՂՄՈՍԱՍԸՑ
ԵՒ ՍԵՏԱՆԸՑ *

(48V=46 I=47 ag=28 C=28 C²)

Էր մինայկեց մի արար շնութիւն յոլով
 ժամանակս և ունէր սովորութիւն մի բարի-
 զն յեր գար ի շնութենէն ի խուցն իւր, նայ
 ձգէր զինկուզն և հանկրիճէր մոխիր ի վերայ
 5 զլիողն իւր և սկըսանէր սաղմոսել և ծուռդր
 զնելով լար հառաջանաւք և ջերմ արտա-
 սաւք. հարկանէր զերեսն և զկուրծան և ճոխէր
 զմորուսն և թքանէր ի նայ. ձանրացաւ սատանայ
 յաղաւթից նորա. գայ սատանայ ի գիշերի մի և
 10 ստէ ցնայ. այ գարշելի պիղծ, քանի ան հանգիս-
 տես զմեզ և նեղայցնես. զի գաս առնես զկա-
 մրս մեր և շնաս և ուրախ առնես զմեզ. և
 դարձեալ տրանջես զինէն. և առ աստուած
 լաս և հառաչես և տրր[տ]մեցնես զմեզ. և
 15 ստէ միայնայկեացն. ով դու նզովեալ շուն,
 որ մեղաւք ոչ յայգիս այս խուցս դարբնոց
 է գաս դու և կռանով հարկանես զգլուխ
 իմ. և ես յիմարիմ և գործեմ զմեզս. իսկ
 յորժամ զարթնում. և խելք իմ գայ. ես
 20 մեկ կռան քեզ հարկանեմ. զի աստուած ո-
 ղորմած է և ոչ թողու զիս ի ձեռս քո. և
 յանժամ շնորհաւքն աստուծոյ հալածեցաւ
 գնն պողոնկութեան: Յուցանէ առակս թէ
 կռան գիւին բորբորումն և զարութիւն. զի
 30 անտես լինելով հնարիք որսա զազգս մարդ-
 կան և տա՛ գործել զմեզս և այնու անապաշ-
 խարն մարդիկ տանի ի դժոխս և անշէջ հուրն:
 Իսկ կռան միակեցին, թէ զեղջ գալով՝ ապա-
 շուեալ լալով և ապաշխարութեամբ և հա-
 55 առաջամբ ջախջախեալ զգլուխն սատանայի զեր-
 ծան[ի] ի ձեռաց սատանայի և լինի որդի
 արքայութեան և ժառանգ աստուծոյ. (Сборн.
 Пritchъ Вардана, Часть II, 68—69): **

Այժմս անցնինք Հայելուց կատարուած
փոխառութեանցը:

21 յունիսի 1899:

* Վերնագիրը Մատինն է:
 ** Զանց եկի առնում 2-երի տարբեր ընթերցում-
 ները, այդ բանի համար դիմել Մատի հրատարակչա-
 ներ: Վերջին յատկուածք՝ «Յուցանէ առակս, քե կռան
 դիւին ելն» ունի միայն I 2-ր:

ԺԷ

Հայելու հէնց առաջին պատմութիւնը
երկու տարբեր խմբագրութեամբ՝ ընդարձակ
և համառօտ՝ մտել է Առակագրքերի մէջ,
Դնենք նախ Հայելու պատմութիւնը և ապա
Առակագրքերինը:

Լ Ը Ե Ե Լ Ի Վ Ա Ր Ո Ւ Ց

Յաղագս ազահուրեան

ՊԼՈՒՆ Ա.

Ա. Տէրն մեր Յիսուս Քրիստոս հրամայէ
 ի փրկական սուրբ Աւետարանին, թէ Ա՛ւր
 գանձք ձեր անս և սիրտք ձեր եղիցին. Որ
 իսկապէս այսպէս է, Քանզի ոմն մարդ յոյժ
 5 ազաս, արծաթասէր և անյադ, բաղում ինչս
 և մեծութիւնս ստացեալ, ոչ երբէք տայր
 ողորմութիւն ինչ աղքատաց և ոչ ի գործս
 բարիս բաժանէր, կամ զպակասութիւն կարօ-
 տելոց շնոր, Դէպ եղև զի յանկարծամահ մե-
 10 աւ. իսկ բարեկամք նորա և ազգականք հրա-
 մայեցին զորովայն նորա պատառել, զի ան-
 ցնն թէ զի՛նչ իցէ պատճառն այնպէս յան-
 կարծակի մահուան նորա: Եւ իբրև զսիրտ
 ի նմա ոչ գտին, յոյժ զահի հարան: Այլա
 15 ամենեքեան գնացին ի սենեակն ուր զգանձն
 ունէր, բացին զսպաստ և ահա զսիրտ մար-
 ղոյ գտին ի ձեռն սատանայի, որ ի կերպ վի-
 շապի նստէր ի վերայ նորա, և ի զանազան
 մասունս պատառէր զնա: Եւ ստէ ցայնտիկ
 20 որք հայէին. Այն ոսկի և արծաթ է գին
 սրտին, ընդ որ վաճառեաց ինձ բարեկամն
 ձեր, իրաւամբք իմ սեպհական է, և զոր ինչ
 կամիմ արարից ընդ նմա, (ԱԶ, էջ Յա-բ): *
 Ազահութեան այս պատմութիւնն ունի
 Բերլինի № 95 Ժողովածուն, զրեթէ բառա-
 ցի, որից և ահա Մառի հրատարակածը:

* Միւս 2-երի տարբեր ընթերցումները զանց եկի
 առնում: Տես այն այս պատմութիւնը եւ Յայմատուրբում
 սկսք 28. «Ի սինն ատուր յիշատակ և սխանկեացն Աս-
 տուծոյ. Տերմ մեր Յիսուս Քրիստոսս հրամայէ
 ի սուրբ աւետարանին . . . ելն», բառացի առ-
 նուած Հայելուց: Յայմատուրբ մագաղաբայ, բոլոր-
 գիւ, անբուական, № 1487/1 (Դրուած, ուրեմն, 1660
 րուականից յետոյ):

ՃԼԸ. 12 ԲԵՐԸ. 95, էջք 215-216

և յոր ոմն էր յ՛յժ ագահ և արծաթասէր
 և անյագ. և ժողովեալ բազում ինչս և ստա-
 ցուածս և ոչ երբէք տայր ողորմութիւնն աղ-
 քատաց և կարօտելոց. դէպ եղև նմայ յան-
 5 կարծ[ա]կի մեռանիլ. իսկ բարեմկամքն և
 ազ[գա]կանք նորա պատառեցին զյորովայն
 նորա. զի տեսցեն, թէ զինչ իցէ պատճառն
 յանկարծակի մահուան նորա, և տեսին. զի
 սիրտն նորա ոչ ունէր ի տեղի իւր. և ապայ
 10 գնացին ի սենեակն բացին ըզսընտուկն գան-
 ձին և զտին զսիրտն մարդոյն ի մէջ սընտու-
 կին ի ձեռն սայտայնայ[ի], որ ի կերպարանս
 վիշապի եղեալ նստէր և ի զանազան մասունս
 պատառեալ զնայ. և ասէ ցայնոսիկ, որք հա-
 15 յէին. այս ոսկի և արծաթ է կին սըրտին,
 որ վայճառեաց ինձ բարեկամն ձեր. իրա-
 ւամ[բ]ք իմ սեփայկան է և զոր ինչ կամիմն,
 արարից զնայ» (Сборн. Притчъ Вардана,
 Часть II, 337):

Նոյն պատմութիւնն է, առնուած Հա-
 յիլոց, համառօտ խմբագրութեամբ, Աղուէ-
 սազրքի և երկու ուրիշ ժողովածուների մէջ.

ՃԼԸ. ՈՒՐ ԳԱՆԶՔ, ԸՆԴ ՍԻՐՏՔ *
 (12 ag = 7E = 9 F)

Երան աւետարանին, որ ասէ. ուր գանձք
 ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին: Մեռաւ
 ոմն իշխան, որ ունէր բազում գանձս ոսկւոյ
 և արծաթոյ և յականց. և ո՛չ ասաց խոստո-
 5 վանհօրն. և ի լուանալն գտին բալանի մի
 յանժատակն և տարան առ վարդապետն. և
 բացեալ զանգուկն՝ տեսին, զի սիրտ արեւնա-
 թաթախ կայր ի վերայ ընչիցն. զի ծշմար-
 տեաւ է» (Сборн. Пр. Вард. Ч. II, 213):

Եթէ, ինչպէս մենք կարծում ենք, այս
 մէջ բերուած փոխառութեանց երկու օրի-
 նակներն անպայման ծագում են Հայելոց,
 այն ժամանակ ինքնըստինքեան հետեւում է,
 որ թէ Բերլինի № 95 Ձ-ը, որի թուական
 ունենալն ու չունենալը մեզ յայտնի չէ, **
 թէ Աղուէսազիրքը, որն առաջին անգամ
 հրատարակուած է 1668 թուին, թէ E Ձ-ը,
 որ մի մասն է (էջ 90ա-95բ) Մառի գործա-

ծած մի ուրիշ՝ A՝ Ձ-ի և թէ F անթուա-
 կան Ձ-ը՝ ժամանակով աւելի ուշ են քան
 1660 թուականը, որ է Հայելու թարգմա-
 նութեան տարին: Որովհետև այդ բոլոր Ձ-երը
 Հայելու մէջ բերուած հատուածը՝ այս կամ
 այն խմբագրութեամբ՝ ունին իրենց մէջ, Հա-
 յելու Ագահի այդ Պատմութիւնն ունի և
 արար Աղուէսազիրքը, ինչպէս պէտք էր են-
 թաղիլ, քանի որ արարելէնը հայ Աղուէ-
 սազրքի թարգմանութիւնն է, ինչպէս որ այդ
 զրապէս ապացուցել է Մառը ուստի և ար-
 արներէն Աղուէսազրքի թարգմանութիւնն էլ
 չէ կարող 1660 թուից առաջ լինել: Նոյնը
 պէտք է ասել և Աղուէսազրքի վրացերէն
 թարգմանութեան համար:

Մեր այս եզրակացութիւններին հիմ-
 նապէս հակասող միակ փաստն է այն, որ
 Մառի գործ ածած A+E Ձ-ը, որ մեր էջ-
 միածնի Մատենադարանի № 2189₅ն է
 (=Մայր կամ Կարենեան Յուցակի № 2146₅)
 ըստ Մառի նկարագրութեան և ցուցման
 զրուած է Հայոց ՌՊՁ=1617 փրկչական
 թուին, ուրեմն և չէ կարող 1660-ին թարգ-
 մանուած Հայելոց փոխառութիւն ունենալ
 (Տէս Сборникъ էլն. Մասն Ա, էջ 160 § 150
 և ծանօթութիւն 1, որտեղ Մառը տալիս է
 Ձ-ի նկարագրութիւնը, ի միջի այլոց ասելով՝
 переплечикъ (?) Григорій..Время ՌՊՁ, т. е.
 1617 г. по Р. Хр.): Մեր եզրակացու-
 10 թեան դէմ յարուցուած այսպիսի մի դժուա-
 րութիւն հերքելու համար հարկ եղաւ նո-
 րից զննել № 2189₅ Ձ-ը: Ձ-ի առաջին մասը
 1ա 70ա գրուած է մի այնպիսի գրչու-
 թեամբ, որն իսկապէս աւելի ճիշդ կլինէր
 անուանել բոլորգիր քան նօտր, թէ և թէ
 Մայր Յուցակը և թէ Մառը անուանում
 են նօտրագիր: Այդ անցման քաղաքի է,
 Ձ-ի յիշատակարանը գտնուած է ճիշդ այդ
 70ա էջի ստորտում միեւնոյն անցման
 բոլորգրով. «ԶԳիգոր մեղաւոր զրիչս յիշեա
 ի տէր ով երայր. և որ զիս յիշէ առ աս-
 տուած. յիշեցեալ լինի ի միւսանգամ գա-
 15 լուստն Զրիստոսի ամէն թժ. ՌՊՁ. մարտի
 ԺԱ. էջ 70բ գատարկ է:

Ձ-ի երկրորդ մասը, էջ 71ա-95բ, բուն

* Վերնագիրը Մառի դրածն է.
 ** Էջմիածնի, ինչպէս նաեւ ձեւարանի մասեկա-
 դարանները չունին պ Ն. Բարսեղեանցի կազմած Բերլինի
 Մանն. հայ Ձ-երի ցուցակը:

սովորական նօտագիր է, յամենայն դէպս ոչ Գրագորի կամ Գրիգորի գրչից, այլ բոլորովին տարբեր գրչութիւն, աւելի մութ թըրթի վրայ: Զ-ի այս երկրորդ մասը վերջից թերատ լինելով չունի որ և է յիշատակարան, ուրեմն և անթուական է*: Զ-ի այս անթուական մասումն է «Գիրք Առակաց» էջ 71ա—89բ, որն և Մառը նշանակում է Ա տառով և Առակա որ բանք պիտանիք են: էջ 90ա-95բ, որ Մառը նշանակում է Ե տառով: Եւ որովհետեւ Զ-ի թէ Ա և թէ Ե մասերը բոլորովին նոյն նօտագիր գրչութեամբ են, մի ձեռքից գրուած, մի և նոյն թղթի վրայ, անթուական և որովհետեւ Ե-ի մէջ գտնուած է Հայելուց փոխառութիւն, ուստի և՛ թէ Ա-ն և թէ Ե-ն գրուած պէտք է լինին 1660 թուից յետոյ:

Այսպիսով ուրեմն Հայելի Վարուցը տալիս է մեզ մի սահմանորոշ թուական ոչ միայն Աղուէսազրքի, նրա արարերէն և վրացի թարգմանութեանց, այլ և Մառի Ա, Ե, Բ և ԲԵՂՂՆԻ № 95 Զ-երի համար, որոնք իրենց այժմեան կազմութեամբ, առակների այժմեան թուով և փիճակով չեն կարող 1660 թուից առաջ լինել, թէ և իրենց բովանդակութեան մեծ մասովը լինին, ինչպէս և են իսկապէս, այդ թուից շատ կանուխ:

Նկատելու է նաև, որ Հայելու թարգմանութիւնից հազիւ 8 տարի անցած, արդէն Աղուէսազրքում (1668) փոխառութիւն ենք գտնում Հայելուց: Այսպիսի արագ ազդեցութիւնը հեշտութեամբ բացատրում է Հայելու կարճատև պատմութեանց առականման, խրատական և հեռաբերաշարժ նիւթի յարմարութեամբ Առակազրքերի համար: Տեսանք արդէն, որ Դարբիժեցին 1662-ին յիշելով Հայելին, կոչում է նրան «բանք առակաւոր», որ զվարուց և զկենցաղավարութենէ մտորդիան պատմէ, իբր թէ օրինակ ամենայն մարդկան . . . և յոյժ համեղ և ախորժ են բանք այս Գրոյս»: Հասկանալի է ուրեմն, որ Առաքելի ժամանակակիցները, որ նրա ծա-

շակն ունէին, պիտի շտապէին այդ «համեղ և ախորժ» պատմութիւններն իրենց ժողովածուների մէջ մտցնել: Ի վերջոյ անհրաժեշտ է աւելացնել և այն, որ Մառը խօսելով Արեւմտեան-Եւրոպական ազդեցութեան մասին Առակազրքերի վրայ, և մատնանիշ լինելով խրատական «և հեռաբերաշարժ» պատմութեանց ժողովածուների, մանաւանդ թարգմանականների ուսումնասիրութեան անհրաժեշտութեան վրայ, անցողակի յիշում է ի միջի այլոց նաև՝ Ստեփանոսի (Լեհացու) թարգմանած քանք առակաւորը, այսինքն է Հայելի Վարուցը, առնելով Առաքել Դարբիժեցուց (Сборникъ Ч. I. § 267):

Գալուստ Տէր Մկրտչեան

22 Յունիսի 1899.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԳՎԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒԱՅՔ)

(Շարունակութիւն) *

Ե.

Հ Ա Յ Կ Ի Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ը

Հայկի առասպելն էութեամբ վիպական է: Այս առասպելը, ինչպէս բերած օրինակներից երևում է, իւր էական գծերով մի այնպիսի պատմութիւն է, որ շատ տարածուած է: Մենք բերեցինք իբրև օրինակ Դաւթի և հսկայ Գողիթի կոիւր, որին նման է Սմբատի ու Հեփթաղի կոիւր, իսկ այս երկսին նման է, մտտամբ միայն, Տրդատի ու Դթաց իշխանի կոիւր: Հայկի ու Բէլի կոիւն՝ սասնց նման լինելով հանդերձ՝ աւելի նման է հսկայ Սամի և Զէրքույի կոուին: Մենք օրինակները, որոնց նմանները յետոյ էլ կրթանենք, կարող էինք բազմապատկել, Բայց բերածնե-

* Աւելի միշտ լինելու համար պէտք է տակ, որ էջ 89՞ կայ մի սոյ՛ «Ո՛վ բերեցոյ՛ յիշեցի՛ գանձմանս» յիշատակարանի սկզբում: որ ևւ այդպէս մենք էլ բերի:

* Տես. «Արարտ» 1899 թ. համար ժԲ. եր. 529.